

# Միջազգային տնտեսական անորոշությունն ու Հայաստանի տնտեսությունը

## Համառոտագիր



Մարդկային  
զարգացման  
միջազգային  
կենտրոն

2018 թվականից աճում է համաշխարհային անորոշության ինդեքսը<sup>1</sup>: Դրան զուգահեռ նվազում է բիզնեսի տրամադրվածությունը<sup>2</sup>: Աշխարհը խոսում է տնտեսական անորոշության մասին: Իսկ Հայաստանը՝...

... Կենտրոնական բանկի տնտեսական կանխատեսումների վերաբերյալ փաստաթղթերում միշտ է խոսվել: Խոսվում է նաև 2019 թվականի Կառավարության ծրագրում. «Պետական կառավարման ուճացված համակարգը՝ իր տեսանելի և անտեսանելի մարմինների չարդարացված ծավալով, գործառույթների և ոլորտների կրկնությամբ, դրա հետևանքով առաջացած անարդյունավետությամբ, պատասխանատվության մեխանիզմների **անորոշությամբ**, հիմնագուրկ բեռ է հարկ վճարողների համար և լրջագույն խոչընդոտ՝ Հայաստանի մրցունակության բարձրացման ճանապարհին: Մեզ պետք է ծախսարդյունավետ, դինամիկ, ճկուն և մրցունակ պետական կառավարման համակարգ»:

Թերևս, Հայաստանի պաշտոնական փաստաթղթերում սա եզակի հանդիպող անորոշությունն է, սակայն ինչպիսի՞ անորոշություն: Ամբողջ պետական համակարգի օպտիմալ աշխատանքի արդյունավետության ահագանգն է: Ու ինչպե՞ս պետք է գործարարը գնահատի իր բիզնես ապագան նման գնահատականի պայմաններում: Իհարկե, գովելի է, որ խնդիրն արձանագրվում է, սակայն ինչպիսի՞ լուծումներ են տրված:

### Բյուջեն՝ տնտեսության հիմնական արգելակը

Սկսած 2018 թվականի երրորդ եռամսյակից պետական բյուջեն բացասական ազդակ է հաղորդում տնտեսությանը: Եկամուտները հավաքագրվում են, սակայն պլանավորված ծախսերը չեն իրականացվում: Սա կրճատում է ամբողջական պահանջարկը՝ տնտեսությանը հաղորդելով բացասական ազդակ: Իհարկե, սրա բացատրությունը կա: Դա պայմանավորված է ծախսերի որակական փոփոխությունների կարիքով և արդյունավետության բարձրացման դրդապատճառով: Վերադառնալով կառավարության ծրագրին՝ կարելի է ասել, որ անորոշության խնդրի լուծումներից մեկը՝ ծախսարդյունավետությունը, դարձել է գերակա: Մինչդեռ մյուս երեքը՝ «դինամիկ, ճկուն ու մրցունակ» պետական կառավարման ապարատը, անլուծելի են մնացել: Ո՞րն է ճիշտ, երբ չգիտես ուր գնալ՝ կանգնե՞լ, թե քայլել ու հընթացս մտածել: Ցավոք, տնտեսությունը չի կարող կանգ առնել ու սպասել պետական կառավարման ապարատի բարեփոխումներին, զարգացման վեկտորի սահմանմանը, ռազմավարությունների մշակմանը. այս կանգառի համար թանկագին ժամանակ ենք վճարում: Ամեն դեպքում, տնտեսությունը կանգ չի առնում և շարունակում է աճ արձանագրել: Դիտարկենք պատճառները:

### Դրամավարկային խթանը

Կենտրոնական բանկը, տեսնելով բյուջետային բացասական ազդակը, նվազեցրեց տոկոսադրույքը, որպեսզի այդպիսով մեծացնի ամբողջական պահանջարկը: Իհարկե, այս քաղաքականությունն աշխատեց, սակայն ու՞ր ուղղվեցին տոկոսադրույքով պայմանավորված լրացուցիչ միջոցները: Բանկային ցուցանիշներից տեսնում ենք, որ վերջին երկու տարում հիփոթեքային և սպառողական վարկերը գրեթե կրկնակի աճել են: 200 տոկոս աճ: Այսօրվա տնտեսական աճի մակրոտնտեսական պատճառը հենց այստեղ է թաքնված: Արդյո՞ք սա որակական աճ է: Հարցը տարողունակ է, որտեղ կան և՛ դրական, և՛ բացասական ասպեկտներ: Բացասական է, իհարկե, այն հանգամանքը, որ աճը ներդրումներով չի պայմանավորված, ուստի կարող ենք արձանագրել, որ երկարաժամկետ հեռանկարի մասին այս մոտեցմամբ խոսելն անիմաստ է: Մյուս կողմից, տնտեսական աճ՝ առանց ներդրումների աճի նշանակում է միայն մեկ բան՝ աշխատանքի արտադրողականության աճ: Սա, իհարկե դրական է, ծառայությունների ոլորտում աճը Էական է:

<sup>1</sup> <https://www.policyuncertainty.com/>

<sup>2</sup> HIS Markit, [https://cdn.ihsmarkit.com/www/pdf/0919/IHSM-PMI-overview\\_201909.pdf](https://cdn.ihsmarkit.com/www/pdf/0919/IHSM-PMI-overview_201909.pdf)



Երևան 0001  
Սայաթ Նուվա 19  
Հեռ.՝ +374 10 582638  
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org  
www.ichd.org

Հաջորդ դրական գործոնը տոկոսադրույքի փոփոխությանը բնակչության նման արձագանքն է: Եթե մարդիկ սպառողական վարկ են վերցնում, ուրեմն ակնկալում են, որ ապագայում եկամուտներ են ստանալու: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ բնակչության մոտ առկա է դրական սպասումներ ապագայի հանդեպ:

## «Մակրո»-ամփոփում

Պետական կառավարման անորոշություններով պայմանավորված՝ տնտեսական անորոշությունները վերացնելու գործնական քայլերի շարք կարելի է առաջադրել: Սակայն, դա անելուց առաջ, անհրաժեշտ է գիտակցել կարևոր տնտեսական սահմանափակումները՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ տնտեսական ազդեցությունների երկրնտրանքը: Այսօր կառավարությունը որոշել է վերադարձնել 56 միլիարդ ավելի գանձած հարկերը, ինչը դրական ազդակ կհասցնի տնտեսությանը: Սակայն, նույնիսկ այստեղ դեռևս մնում են անորոշությունները՝ արդյո՞ք դա է վերջնական գումարը, արդյո՞ք ժամանակին այն կվերադարձվի, արդյո՞ք վերադարձի հետ կապված նոր խնդիրներ չեն ծագի: Պետական համակարգի հետ գործարարների վստահությունը մեկ օրում հնարավոր չի վերականգնել: Եվ սա ընդամենը մի դրվագ է: Ժամանակն է հասկանալ, որ ծախսարդյունավետությունը պետական կառավարման առավել նվազ կարևոր ցուցանիշ է, ու այն ավելի շուտ սահմանափակում է պետության գործունեությունը: Այլապես պետության բացակայությունը կլիներ լավագույն ծախսարդյունավետ քաղաքականությունը: Փոխարենը՝ այսպիսի երկրնտրանքներ կան.

- հարկաբյուջետային քաղաքականությամբ խթանել տնտեսությունը. կարճաժամկետում նպաստում է զարգացմանը, սակայն երկարաժամկետում բացասական է ազդում բարեկեցության վրա, քանի որ պարտքի գինը թողնում ենք սերունդների վրա,
- դրամավարկային քաղաքականությամբ նպաստել տնտեսության աշխուժացմանը. այն ինչ կատարվում է այսօր, կրկին կարճաժամկետ հավասարակշռում է ամբողջական պահանջարկը, սակայն երկարաժամկետում նորից գին ենք վճարելու՝ հնարավոր գնաճի տեսքով,
- ճյուղային քաղաքականությունը կամ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները. կարճաժամկետում ցավագին են լինում՝ պայմանավորված աշխատաշուկայի ցնցումներով, սակայն ապահովում են երկարաժամկետ բարեկեցությունը,
- ներդրումային քաղաքականությունը. կարճաժամկետում ցավագին չի լինում, և երկարաժամկետ արդյունք է ապահովում:

Այս գործիքակազմից Հայաստանի բոլոր իշխանությունները միշտ նախընտրել են վերջինը, որպեսզի կարողանան համատեղել կարճաժամկետ և երկարաժամկետ օգուտները, բացառություն են 90-ականները: Սակայն, պետք է իմանալ, որ նման քաղաքականությունը Հայաստանի տնտեսությունը պահելու է միջին զարգացում ունեցող երկրների շարքում. երկարաժամկետ մեծ հեռանկարներ չեն լինելու: Նույնիսկ նման քաղաքականության բացակայությունը՝ ներդրումները պարզապես շուկայական մրցակցությանը թողնելու քաղաքականությունը, կապահովի տնտեսական աճ, սակայն ոչ երբեք տնտեսական թռիչք:

Օպտիմալ լուծումն այս բոլորի որակյալ համատեղումն է, սակայն այն անելու համար անհրաժեշտ է վստահելի, անորոշություններից զուրկ, **«ճկուն, դինամիկ ու մրցունակ»** պետական ապարատ: Ժամանակն է խոսքից գործի անցնելու:

*Դրամախարկային քաղաքականության ընթացիկ զարգացումները» կրթ սեդան քննարկում, (առանց հղումների իրավունքի), Հոկտեմբերի 17, 2019,*

*«Հայաստանի Հանրապետության դրամախարկային և ֆինանսական հատվածի արդյունավետ հաղորդակցության ուղիների զարգացմանն ուղղված» ծրագիր*

*«ԱյՍիԷշԴի» ՄԱՐԴԿԱՑԻՆ ԶԱԶԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՄՊԸ*

